

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԸՆԿԱԼՄԱՆ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՀԱՅԵՑԱԿԷՏԸ

Արարիչն ամենեցուն անբերտոյք է ի մարմնաւոր աչաց:
ԵՂԻՇԷ

Բ. Լոյսը որպէս Գեղեցկի աղբիւր

Միջնադարի հեղինակները իրենց գեղագիտական հայեացքները մասին չեն քողել առանձին աշխատութիւններ: Նարեկացին՝ նոյնպէս: Նրանց տեսական մտքերն ու դրոյթները ցրուած են ամենատարբեր բնոյթի՝ հիմնականում ֆերականական, ցարտասանական, մեկնողական եւ փիլիսոփայական երկերում: Եւ որովհետեւ հայ գեղագիտական մտքի պատմութիւնը նոր է սկսուում, ուստի դեռ եւս շատ էիջ է արուածը եւ հայ մշակոյթի այդ մարզը կարօտ է համակողմանի թննութեան:

Նարեկացու գեղագիտական հայեացքները բխում են նրա աշխարհայեցութիւնից եւ, անշուշտ, համապատասխանում են նրա ստեղծագործութեան տարբերիքն եւ բովանդակութեանը: Այդ հայեացքները ձեւաւորուել են ոչ միայն նրա մարդկային ներաշխարհի, այլեւ դարաշրջանի բարոյա-գեղագիտական ըմբռնումների եւ պահանջումների համաձայն: Էականն այդ հայեացքներում հանգում է մարդու եւ աստծու յարաբերութեան, կեանքի եւ իրականութեան ընկալման եւ արտացոլման հայեցակէտին: Իր հայեացքներում Նարեկացին մի կողմից յենուում է այս աշխարհի եւ անդրաշխարհի հակադրութեան վրայ, իսկ միւս կողմից յարում է նոր պլատոնականութեան այն հայեցութիւնը, ըստ որի անփոփոխելի

կատարելութիւնը բխում է լոյսի հորից՝ արարչից եւ նառագայթածել լոյսի մման արտահեղուելով՝ թափանցում բոլոր գոյերի մէջ: Աշխարհի գեղեցկութիւնն ու ներդաշնակութիւնը ընկալում է որպէս աստուածային կատարելութեան ստուերանմանութիւն: Ուստի էական է դառնում ոչ թէ առարկայի պատկերման նմանութիւնն ու նշգրտութիւնը, այլ նրա խորհրդանշական իմաստը: Եւ եթէ պատկերում է մարդկային արտաքին գեղեցկութիւնը, ապա դա էլ արում է յատուկ դիտաւորութեամբ՝ որպէս հոգու, ներքին գեղեցկութեան արտաքին արտայայտութիւն, տեսանելի փայլ: Արտաքին գեղեցկութեան տեսանելի այդ հմայքը մղում է նմանուելու փափաքելի էակին՝ նրա գեղեցկութեամբ գեղեցկանալու համար: Տեսանելի գեղեցկիւր որքան էլ անցողիկ ու ապականացու, բարեմասնութիւնը՝ փոփոխելի, բայց եւ ունեն խորին իմաստ, քանի որ «գաստուծոյն առնուն զգեղեցկութիւն, որք ի նա հային եւ ի նա մօտեման, որպէս պատրոյցն ի նրաքն մերձեմալով՝ ի նոյն լոյս փոփոխի» (ԳՆՄ, 331):

Միջնադարի պատկերացմամբ գեղեցկիւր հոգեւորն է, վերագայականը, աստուածայինը: Հետեւաբար, արուեստը, գրականութիւնը, աստուածաբանութիւնը ձգտում էին մարդուն բարձրացնել զգայական իրերի աշխարհից դէպի նրանց

հոգեւոր եւ մտահայեցական ոլորտները: Ըստ Կղեմես Ալեքսանդրացու՝ «Օրէնսդիրը ցանկացել է մեր միտքն ուղղել դէպի հայեցողական ոլորտ եւ ոչ թէ գամել նիւթի վրայ»(1): Աստուած անիմանալի է եութեամբ, բայց անաչելի է իր ստեղծած գոյերի միջոցով: Եւ որովհետեւ «մարմնով պատեալ են ոգիքն, տեսանելիօքն գիմանալիսն աւանդեաց մեզ»(2), - լրացնում է Յովհան Ոսկեբերանը:

Հայրաբանական գեղագիտութիւնը հիմնականում ելնում էր Պլատոնի՝ առարկայական աշխարհը աստուածային գաղափարների ստուերն է, արուեստը՝ այս ստուերի, նմանութեան աղօտ նմանութիւնը՝ փիլիսոփայական դրոշից: Հայ իրականութեան մէջ Նարեկացին անտիկ գեղագիտական սկզբունքներին ծանօթ էր թէ անմիջապէս Պլատոնի եւ Արիստոսելի եւ թէ առաջին դարերի եկեղեցու ականաւոր հայրերի երկերից, որոնք դեռեւս 5-6րդ դարերում թարգմանուել էին հայերէն: Նարեկացու գեղարուեստական մտածողութեան եւ գեղագիտական հայեացքների վրայ իրենց ազդեցութիւնն են թողել հայոց հին դասականների՝ Ագաթանգեղոսի, Եղիշէի, Խորենացու եւ , մանաւանդ, Դաւիթ Անյաղթի գործերը: Բայց Նարեկացին միստիկ էր, եւ այս մօտեցմամբ արդէն նրա գեղագիտական հայեցակէտը սերտանում է Դիոնիսիոս Արեոպագացու՝ գեղեցիկի մասին ֆրիստոնէացուած նորպլատոնական հայեացքների հետ: Ըստ Արեոպագացու՝ աստուածութիւնը միակ եւ նշմարիտ, յաւիտենական եւ անտարբեղէն այլ լոյսն է, որ «լուսաւորէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ, որով առ սկզբնալոյսն հայր զմատչելն ընկալաք յաստուածայնոց բանիցն հայրենաւանդ լուսափայլութիւնս»(3): Այդ լոյսի մէջ բացարձակօրէն նոյնական են Ս. Երրորդութեան երեք անձերը՝ Հայրը, Որդին եւ Ս. Հոգին: Աստուած ոչ միայն

կատարեալ գեղեցիկն է ինքն իր մէջ, այլ եւ գործուն սկիզբ է եւ նախապատեան: Բոլոր գեղեցկութիւնների բացարձակ նախածին է, անփոփոխելի տիպը: Վերգգայական այդ գեղեցիկը նոյնական է աստուածային լոյսի հետ: Թէ ինչպէս է այդ գեղեցիկը մարմնանում նիւթի մէջ, Դիոնիսիոսը բացատրում է արեգակի նիւթեղէն լոյսի ներգործութեան զուգահեռով: Արեգակի լոյսը տարածուելով առաջ է քերում փայլ եւ գոյն: Նա ստեղծում է մարմնաւոր գեղեցկութիւնների բազմութիւններ: Գոյները որքան անլի շատ լոյս են պարունակում, այնքան անլի գեղեցիկ են նրանք: Գոյների տարբերութիւններն առաջ են գալիս լոյսն ընկալող մակերեսների տարբերութիւններից: Որքան քիչ լոյս են ընդունում նրանք, այնքան էլ գոյները դառնում են կոպիտ, կոշտ ու այլանդակ: Նշանակում է, տարբերութիւնը արեգակի լոյսի մէջ չէ, այլ գոյի: Այսպէս էլ աստուածային անիմանալի լոյսը ունի միասնական բնոյթ: Այսպէս էլ աստուածային անիմանալի լոյսը ունի միասնական բնոյթ: Նա իր մէջ պարունակում է բացարձակ եւ միաձեւ գեղեցիկը: Այդ գեղեցիկն է, ահա, որ մարմնաւորում է ստեղծուած բոլոր գեղեցկութիւնների մէջ: Նրանց միջեւ եղած տարբերութիւնն էլ առաջ է գալիս հենց աստուածային գեղեցիկ ընկալման տարբերութիւնից: Մարմնաւորումն ձեւը ինչ-որ չափով հեռանում է աստուածային նախածելից, գեղեցիկը՝ գեղեցիկից, նմանութիւնը՝ նմանութիւնից: Ահա թէ ինչու ձեւերի տարբերութեան մէջ արդէն աղօտանում է վերգգայական գեղեցիկ կատարեալ ձեւը, որից առաջ են գալիս միւս բոլոր ձեւերը: Ամէն մի գեղեցկութիւն որքան անլի մաքուր է ընդունում աստուածային լոյսը, այնքան անլի նման է առաջին լոյսին: Բայց որքան այդ ձեւը, այդ գեղեցիկը հեռանում է իր լոյսի աղբիւրից՝

աստուածայինից, մարմնաւորուելով նիւթի անհամար ձեւերի մէջ, այնքան անելի աղօտանում է նրա նմանութիւնը սկզբնալոյսի յարաբերութեամբ, այնքան անելի պակասում, նուազում է նրա գեղեցկութիւնը: Եւ ինչպէս աստուածութիւնը, որ որպէս լոյս անազայթելով եւ ներհեղուելով ամէն մի գոյի մէջ, դառնում է նրա կեանքը, գեղեցկութիւնը եւ հոգին, այնպէս էլ ամէն ինչ լոյսի նման կրկին ձգտում է դէպի աստուած՝ անցնելով կատարելութեան իր աւարտին, որի շարժիչ ուժը դառնում է գեղեցկին հասնելու ցանկութիւնից ծնուած սէրը:

Այն, ինչ փորձեցի շարադրել իմ քառերով, խտացում է Արեւոպագացու հետեւեալ խորհրդածութեան մէջ. «Եւ գերեւելի գեղեցկութիւնսն անբերութի վայելչութեան կերպարանսն համարեցումք. եւ զգգայական անուշահոտութեանն պատկեր՝ զնիւթականս լոյս, եւ զըստ մտաց տեսականին լրութեան՝ զանապարհորդականսն սրբազան աշակերտութիւնս, եւ յաղաւորի առ աստուածայինսն եւ կարգեցելոյ ունակութեանցն՝ զաստանար գարդուցս կարգս, եւ Յիսուսի հաղորդութեանցն՝ զաստուածայնոյն գոհութեան հաղորդութիւն, եւ որքան այլ ինչ երկնայնոյն էութեանց է գեղազարդարար՝ մեզ արինակաւ աւանդեցաւ»(4):

Երկնայինը երկրայինի օրինակով տրուած լինելու միտքը, ինչպէս ասուեց, Նարեկացու համար եղել է անտարակուսելի ճշմարտութիւն: Նա համոզուած է, որ «ի ձեռն մարմնաւորացս տեսցումք զհոգեւորսն» (ԳՆՄ, 275): Գոյերի միջոցով հոգեւոր իմաստներ տեսնելու միտքը ունի երկու կողմ. մէկ, որ գոյի, երեւոյթի, առարկայի մէջ ներհեղում է աստուածային լոյսի անազայթը եւ, երկրորդ, որ տեսանելի իրերը այլ բան չեն, քան անբերութի խորհրդանիշ: Էականը զգայականից

քարճրանալն է դէպի մտահայեցականը, աստուածայինը, դէպի Աստուած: «Զի որպէս որ յանուշահոտ մերձեանայ՝ անուշահոտի, նոյնպէս եւ որ առ Աստուած մերձեանայ՝ աստուածանայ» (ԳՆՄ, 331):

Այսպիսով՝ Նարեկացին բնութեան տեսանելի գեղեցկութեան մէջ տեսնում է աստուածային գեղեցկի փայլը՝ մի կողմից, միւս կողմից՝ մարմնաւորի միջոցով ձգտում է բացայայտել հոգեւորը: Եւ բնութեան նրա զգացողութիւնը, որքան էլ յուզական ու նկարչագեղ, գեղարուեստական նպատակ չէ, այլ հոգեւոր գաղափարներ արտայայտելու միջոց:

Հին մեկնիչները գտնում էին, որ մարդկային ոգին ճշմարտութիւնն անելի դիրին է ընկալում, երբ այն մատուցում է պատկերաւոր ձեւով, գեղեցիկ օրինակով, այլաբանաբար: Առակի այլաբանութիւնն էլ այլ բան չէ, քան վառ օրինակով, դիմառնաբար, մատուցել բարոյախօսութիւնը: «Առանց օրինակի բանն շոյտ գնայ ի մարդոյն - գրում է միջնադարի մի հայ մեկնիչ - բայց գեղեցիկ օրինակաւ հաստատ մնայ»(5): Նարեկացին գեղեցիկ օրինակներ է վերցնում բնութիւնից՝ իր մտքերը պատկերաւոր արտայայտելու համար: Բայց սա արդէն գեղագիտական այլ մօտեցում էր բնութեանը:

Ըստ Նարեկացու՝ բնութիւնն Աստծու ստեղծագործութիւնն է, եւ ոչ միայն տերեւն է իբրեւ տաւիղ օրհներգում Աստծուն, այլեւ «հնչուն բնութիւնն առհասարակ, դա Աստծու քնարն է», ինչպէս ասում է Արեղեանը եւ անկասկածաբար՝ «Բանաստեղծն ինքն էլ, սակայն, Աստծու քնարն է», ինչ նշանակում է, թէ «Նարեկացու հայեացքով՝ բանաստեղծն էլ նոյնն է անում, ինչ որ բնութիւնը: Նա երգելով բնութիւնը՝ նուազում է աստուածային քնարի վրայ»(6):

Բնութիւնը դառնում է քնարերգութեան նիւթ, ներշնչանքի աղբիւր: Բնութեան

նկատմամբ Նարեկացու վերաբերմունքը, սակայն, անբաժան է նրա կրօնա-միասնական ընկալումից: Բնութիւնը նա չի պատկերում ինքնին, առարկայօրէն անկախ, առանց միասնական յանելիքի շղարշի: Եւ դարձեալ նրա կողմէն, որովհետեւ աշխարհիկ տարրերը սկզբնապէս գրականութեան եւ արուեստի մէջ չէին կարող ներթափանցել այլ կերպ, քան շղարշուելով կրօնա-միասնական ֆօղով: Նարեկացին բնութիւնը պատկերում է այլաբանօրէն, իրերն ու երեւոյթներն իմաստաւորում է իրրեւ խորհրդանշաններ: Եւ միանգամայն իրաւացի է Արեւելուն, հաւաստելով, թէ «Արտաքին բնութիւնից, սակայն, նա դեռ բանաստեղծական պատկերներ է առնում նմանութիւնների, գեղեցիկ ձեւի համար, կամ այն գործածում է այլաբանութեան համար ...»(7):

Թէեւ Նարեկացին «բնութիւնն զգում է իրրեւ շարժող, ապրող, կենդանի միութիւն, որ ունի իր վսեմ խորհրդաւորութիւնը»(8), այնուհանդերձ բնութիւնը նրան յուզում է իրրեւ աստուածութեան կենդանի, տեսանելի արտայայտութիւն: Նարեկացին բնութիւնը երգում է այլաբանօրէն, եւ ստեղծում է մտայնացման եւ գեղարուեստական մարմնաւորման ներքին հակասութիւն: Նարեկացին նախապէս գիտէ, թէ ինչի մասին պէտք է գրի, եւ իր թեման խստօրէն պարփակուած է կրօնա-եկեղեցական գրականութեան ոլորտով: Մտայնացման իրականացման մէջ է, որ նա դիմում է այլաբանական հնարանի՝ ֆնարական անմիջականութեամբ արտայայտելու րոպանդակութիւնը:

Նարեկացին մէկ անգամ չէ, որ խօսել է ստեղծագործական ներշնչանքի մասին: Նրան ամենից առաջ մտահոգել է բանաստեղծութեան յուզական ներգործութեան խնդիրը:

Այն նշմարութիւնը, թէ երգը ծնունդ է ներշնչանքից, յայտնի էր խոր հնադարից: Դեռեւս Դեմոկրիտոսն էր ասել, որ «Գեղեցիկ է այն ամենը, ինչ բանաստեղծը գրել է աստուածային ներշնչանքով»(9), եւ ապա՝ «Առանց խնեթութեան չի կարող լինել ոչ մի մեծ բանաստեղծ»(10): Այդ խնեթութիւնը Նարեկացու հանճարի հարազատ տարբերք էր. «Այսաւր՝ մաքուր հոգեկիր, եւ վաղիւ՝ մոլի խելագար» (Բան ՀԱ, գ): Նոյն հարցի մասին Պլատոնը գրել է այսպէս. բանաստեղծը կարող է «ստեղծագործել միայն այն ժամանակ, երբ լինում է ոգեշնչուած եւ խիստ յուզուած, երբ դատողութիւնը տեղի է տալիս նրա մէջ, իսկ ֆանի դեռ մարդու մէջ կայ դատելու ձիրքը, նա ընդունակ չէ ստեղծագործելու եւ մարգարէանալու»(11): Եւ ապա՝ «Աստուած հենց նրա համար է բանաստեղծներին զրկում դատողութիւնից, նրանց դարձնում իր սպասաւորները, իր գուշակներն ու մարգարէները, որպէս զի մեծ լսելով նրանց, իմանանք, թէ իրենք չէ, որ դատողութիւնից զրկուած այդքան թանկագին խօսքեր են ասում, այլ Աստուած ինքն է խօսում՝ նրանց միջոցով իր ձայնը յայտնելով մեզ»(12): Ըստ Նարեկացու՝ ստեղծագործական ներշնչանքը բխում է Ս. Հոգուց: Նա էր, որ «փայլեաց ի գիրս աւանդականաց, արար հանճարեղս, գաւրացոյց իմաստունս, լցոյց վարդապետս» եւ «շնորհեաց ձիրս» (Բան ԼԴ, է): Նարեկացուց առաջ՝ Դավթակ Քերթոզի համար արդէն՝ մուսային փոխարինել էր «Աստուածային բանին արուեստաւոր Հոգին»(13): Էութիւնը նոյնն էր՝ շնորհը տրուում է ի վերուստ. «Ի՞նչն ազդեցաւ գրել ինձ գոսսին» (Բան ՀԴ, գ), - ասում է Նարեկացին: Եւ որովհետեւ խօսքի ձիրքը բխում է Ս. Հոգուց, ուստի Նարեկացին ստեղծագործում է ազատ, ինքնարուի, հեղեղի պէս՝ հորդ, հրաբխի մասն՝ անկասելի: Նա մարմնաւորում է

անհասարակ մարդուն՝ իրրեւ հոգի, ուստի անհատական սկիզբը նրա ֆնարեքութեան մէջ վերանձնական բնոյթ ունի եւ շատ քիչ անգամ միայն՝ անձնական շեշտեր: Չկայ ներքին մի տառապանք, տագնապ ու տարակոյս, յոյս ու ձգտում, որ Նարեկացին չպատկերի որպէս ընդհանուր, համամարդկային երեւոյթ: Նրա մտքի փիլիսոփայական խորութիւնը ներթափանցուած է ֆնարական ապրումների անմիջականութեամբ: Հոգեբանական նշմարտացիութիւնը Նարեկացին համարել է իր ստեղծագործութեան կարեւոր առանձնայատկութիւններից մէկը: Ինչ յատուկ է մարդուն, մէկին, յատուկ է նաեւ բոլորին. ահա Նարեկացու գեղագիտական ելակէտը հոգեբանական նշմարտացիութեան հարցում: Անհնարին է բուարկել մեղքերը, բայց իմաստասիրօրէն կարելի է ֆանաչել նրանց էութիւնն ու կործանարար ներգործութիւնը:

Եւ արդ, եթէ ոք զանձն ոչ խաբսցէ,
Եւ առ երեսս ոչ կերպարանեցի,
Եւ կեղծաւորաբար ոչ անհաւատեցէ,
Եւ մարդ զինքն ծանիցէ,
Եւ հասարակաց բնութեամբ վարեցի,
Եւ երկրածին զանձն դիտեցէ,
Եւ ի չափ իւրում կանոնին կացցէ,
Իմասցի, ծանիցէ զնախաբի մասունս
արկածից վերագրելոց,
Թէ ոչ ընդունայ ինչ գրեցի
Եւ կամ զբնաւ իսկութիւնն սահմանեցի,
Որ ի մերս բնութեան պտուտկի ազգի
ազգի վրիպականութիւն,
Այլ ի բիրուցն արգասեաց չարեաց չափ
մի երեւեցուցի,

Ջի նոքաւ եւ զայլն իմաստասիրեսցիք,
Թէպէտ եւ ոչ բովանդակապէս:

(Բան 2, Ե)

Հեզելը ֆնարական ստեղծագործութեան իսկական բովանդակութիւնը համարում է մարդու ներաշխարհը, «հենց ինքը՝ հոգին, այն, ինչ յատուկ է

անհատականութեանը իրրեւ այդպիսին, այնպէս որ ողջը վերաբերում է զգացող հոգուն եւ ոչ թէ այն բանին, թէ ինչ առարկային մասին է խօսքը»(14): Այդ ինքնաարտայայտութիւնը չպէտք է լինի նեղ անձնական, պատահական ապրումների ու մտքերի վերարտադրութիւն, այլ «բանաստեղծի՝ որպէս առանձին անհատի բոլոր մտահայեցութիւններն ու զգացմունքներն, ինչպիսի ինքնատիպ սեփականութիւն էլ լինեն եւ որպէս այդպիսին՝ ինչպէս էլ պատկերուեն, պէտք է օժտուած լինեն ընդհանուր նշանակելութեամբ, այսինքն իրենք իրենց մէջ պէտք է լինեն նշմարտացի զգացմունքներ եւ դատողութիւններ, որոնց համար կենդանի բանաստեղծութիւնը գտնում է համապատասխան արտայայտութիւն»(15): Նարեկացու մտեանը որպէս «համայնապատում խոստովանութիւն»(Բան 1Բ, ա) անհատականը խտացնում է համամարդկայինի, համամարդկայինը՝ անհատականի մէջ՝ իրրեւ նշմարիտ ֆնարական ստեղծագործութիւն: Բնութագրելով Նարեկացուն, Մ. Արեղեանը գրում է. բանաստեղծը «իր սրտի մէջ պիտի զգայ իր ժամանակի եթէ ոչ բոլոր մարդկանց, գոնէ իր հասարակութեան, իր դասի հոգին, եւ ոչ միայն իր սրտի բարախումները դնի իր երկի մէջ, այլեւ ուրիշներինը»(16): Ընդհանուրի եւ անհատականի այս փոխադարձ կապը Նարեկացին տուել է յստակ ու հակիրճ. «Ես ամենայնն, եւ յիս ամենեցունն»(Բան 1Բ, գ) :

Նարեկացու գեղագիտական հայեացքների եւ գեղարուեստական մտածողութեան վրայ որոշակի ազդեցութիւն է ունեցել ժողովրդական բնահիւսութիւնը: Դա արտայայտուել է ոչ միայն նրա ստեղծագործութեան ժանրային համակարգի, ձեւականութեան փայլուն տարրերի, լեզուի

ու ոնի, տաղաչափութեան, յանգի օգտագործման մէջ, այլև նրա ստեղծագործութեան աշխարհիկ լիցքերի հարստութեան մէջ: Նարեկացին որքան խոր է թափանցել ժողովրդական երգերի քանաստեղծական արուեստի գաղտնիքների մէջ, այնքան սուր է զգացել գեղարուեստական խօսքի յուզական ներգործութեան անհրաժեշտութիւնը: Աղօթքը որակապէս փոխում էր, դառնում յուզական եւ ներգործուն՝ բխելով մարդու անձնական կենսափորձից, կենսական տպաւորութիւններից եւ իմացութիւնից: Տեսականօրէն դա հիմնաւորել էր Անանիա Նարեկացին՝ իբրեւ ընտրութեան արուեստ: Աղօթքը յուզական դարձնելու համար, ըստ Անանիա Նարեկացու, մարդը պէտք է ընտրեր այնպիսի օրինակներ, պատճառներ ու նմանութիւններ, որոնց զուգադրութիւնից ծնուէին հոգեկան խորին խռովքներ, ինչպէս ծիծաղը՝ հարսանքատանը, ծաղրածուի ելոյթի ժամանակ, լացը՝ սգատանը, լալական կանանց ողբի ազդեցութեամբ(17):

Գեղագիտական այս պահանջը իր լիակատար արտայայտութիւնն է գտել Նարեկացու ստեղծագործութեան մէջ: Մատեանի՝ որպէս ողբի, մտայղացման ակունքները անմիջական կապ ունեն լալեաց երգերի հետ: Այդ կապի մասին Նարեկացին ուղղակի յիշակատել է Մատեանի ԻԶ եւ ԿԸ գլուխներում:

Եւ այսպէս՝ Նարեկացու գեղագիտական հայեցակէտը, նրա տեսական առանձին հայեացքները ձեւաւորուել են նորալատոնականութեան եւ հայրաբանական գեղագիտութեան սկզբունքների, այնպէս էլ ժողովրդական

քանարուեստի առանձնայատկութիւնների իւրացման եւ զարգացման հիմքի վրայ: Գեղեցկի մասին նրա հայեացքների մէջ սերտօրէն միահիւսուել են ինչպէս Դաւիթ Անյաղթի եւ հայ հին դասական գրողների, այնպէս էլ եկեղեցու նշանաւոր հայրերի եւ Կեղծ-Դիոնիսիոս Արեոպագացու հիմնական դրոյթներն ու մտքերը:

Ի հարկէ, Նարեկացին տեսաբան չէր: Նա չի ստեղծել իր գեղագիտական հայացքների համակարգը: Նա յանախ հենուել է իր իսկ ստեղծագործական փորձի, քան առանձին հեղինակութիւնների մտքերի վրայ: Եւ այստեղ կարելու է, որ նա ինքնուրոյն մտածող է, իսկ իբրեւ քանաստեղծ՝ անզուգական: Նրա ստեղծագործութիւնը նշանաւորեց անհատական քնարերգութիւնը միջնադարեան հայ գրականութեան մէջ, բացեց նրա զարգացման մայրուղին:

Դաւիթ Անյաղթ գտնում էր, որ Աստուած փիլիսոփայութիւնը պարգեւել է հոգին գեղեցկացնելու համար, որ նրա նպատակն է զարդարել մարդկային հոգին եւ նիւթականից բարձրանալ դէպի աստուածայինը: «Եւ պարտ է գիտել - գրել է Անյաղթը - թէ վասն այսորիկ է իմաստասիրութիւն. վասն զարդարելոյ եւ պանունելոյ զմարդկային հոգիս եւ փոփոխելոյ զնա ի նիւթային եւ ի պառախղուտ կենցաղոյս յաստուածահնս եւ յաննիւթացն» (18): Մարդկային հոգիները գեղեցկացնելու, ազնուանալու եւ աստուածանալու այս դերը Նարեկացին վերագրում էր քանաստեղծութեանը, եւ հայոց հին ու նոր քանաստեղծութիւնը չունի ուրիշ մի երկ, որ այդ նպատակին ծառայած լինի անլի լաւ, քան Նարեկացու մատեանը:

Գ. Լոյսի աղբիւրին հասնելու նախապարհը

Նարեկացին ապրել է հասարակական հակամարտութիւնների խռովայոյզ դարում: Պայքարը խորթ չէր նրա հոգուն, եւ եթէ նոյնիսկ մեզ աւանդուած չլինէին այն փաստերը, որ հալածել եւ բանադրել են նրա հօրը՝ Խոսրով Անճեւացուն եւ ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն, եթէ նա նոյնիսկ գրած չլինէր իր թուղթը Թոնդրակեցիների դէմ, միեւնոյն է, դարի գաղափարախօսական պայքարի մթնոլորտը կարելի է զգալ նրա գեղարուեստական ստեղծագործութիւնից եւ, մանաւանդ, նրա պաշպանած բարոյագիտական հայեացքներից: Երեսուցիների գնահատութեան մէջ Նարեկացին հաստատում է այն, ինչ համապատասխանում է խղճի, բարու, չարի, սիրոյ, առաքինութեան, մարդու կոչման եւ կեանքի իմաստի իր պատկերացումներին, իր իդեալին: Բարոյական այս եւ նման շատ խնդիրներ միշտ էլ ծառայում են մարդու՝ առաւել եւս դարի բանաստեղծի առաջ: Բարոյականութիւնը հենց այս տեսակից եւս այսօր յարուցում է մեծ հետաքրքրութիւն:

Նարեկացու բարոյագիտական հայեացքները ձեւաւորուել են Աստուածաշնչի, գրականութեան, ժողովրդական կենսափիլիսոփայութեան եւ իր անձնական կենսափորձի հիման վրայ: Նարեկացին Աստծուն վերագրում է բացարձակ կատարեալ բարոյականութիւն: Աստուած տիեզերքի բացարձակ խիղճն է: Մարդկային խիղճը միայն յարաբերական անկատարութեամբ է իր մէջ կրում այն: Եւ եթէ երկրային կեանքի իմաստը Նարեկացին տեսնում է բարոյական ինքնակատարելագործմամբ հոգով Աստծու հետ միանալու մէջ, ապա այդ նպատակի իրականացման ուղին նա տեսնում է աւետարանական պատուիրաններին

հետեւելու մէջ: Դժուարին, բայց անյաղթահարելի չէ այդ ուղին: Այն անցել են սրբերն ու արդարները՝ Աստծուն նմանուելու նպատակամետ ճգնամար: Ու թէն նրանցից ոմանք սայթաքել ու գայթել են՝ իբրեւ մահկանացու, բայց աւելի յանախ կանգնել են վերստին՝ Ս. Հոգու լոյսով պայծառացած՝ առաքինութեամբ յաղթահարելով մարդկային բնութեան տկարութիւնը (Բան ՀԱ, ա): Նրանք դարձել են պաշտելի, արժանացել աստուածային օրհնութեանը, որովհետեւ՝

Յորս չիք ինչ նշմարանք եւ կամ գիտք խաւարի,

Այլ ամենեւին անկեղծութիւն եւ լուսաւոր արդարութիւն:

(Բան ՀԱ, ա)

Եւ հենց նրանց կերպարն էլ Նարեկացին դարձնում է կեանքի իմաստ եւ հասանելի նպատակ: Թէ՛ այդ սրբերի ու արդարների եւ թէ՛ Նարեկացու իդեալը նոյնն էր՝ Քրիստոսը: Նարեկացու ողբերգութիւնը ծնում է նաեւ հենց այն գիտակցութիւնից, որ ինքը իր հոգու աչքը չի հառել Քրիստոսին, «որով ընդ ուղիղն հետեւեցայց» (Բան ՄԵ, գ):

Հաւատ, յոյս եւ սէր, - ահա առաքինութիւնների այն ամբողջութիւնը, որ կազմում է միջնադարեան բարոյականութեան առանցքը: Առանց հաւատի հնարաւոր չէ ո՛չ մեղքերի փառութեան, ո՛չ ներման շնորհ, ոչ հոգու փրկութիւն: Մինչդեռ «Զամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն» (Բան Ժ, գ): Եւ քնական է, որ Նարեկացին համոզուած ասէր. «Յուսով հաւատամ Յիսուսի Քրիստոսի առնել՝ գոր կամի» (Բան ԺԱ, ա): Հաւատը մարդու բարոյական արժանիքներից առաջինն էր միջնադարում: Յիսուսը կոյրերի աչքերին լոյս չպարգեւեց, մինչեւ չընդունեց նրանց հաւատի

երաշխիքը: Ըստ 'Նարեկացու' հաւատը կեանքի առաջնորդ սկզբնաշաւիղն է մարդու համար, իսկ Աստծու համար՝ ամենահանելի անուշահոտութիւնը բոլոր խնկարկումներին:

Հաւատն առ Աստուած անբաժան է սիրուց եւ յոյսից: Քրիստոնէական կրօնը մերձաւորի նկատմամբ կարեկցանքը բարձրացնում է աստուածային սիրոյ աստիճանի: Նարեկացու համար ոչ միայն աստծու պատուիրան, այլ բարոյական ուղեցոյց է եղել Յովհաննէս անտարանչի պատգամը. «Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած եւ եղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր, զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես՝ զիա՞րդ կարիցէ սիրել» (Ա Յովհ., Գ, 20) :

Մարդու՝ որպէս եղբոր նկատմամբ քրիստոնէական հումանզիմի այս գիծը խոր արտայայտութիւն է գտել Նարեկացու ստեղծագործութեան մէջ: Ոչինչ մարդուն այնպէս չի վերափոխում, որքան սէրը: Սէրն է, որ նրան մղում է բարձրանալ կենդանականից, մարմնական կրքերից եւ ձգտել բարոյական վերափոխման: Բարոյական ինքնակատարելագործման այդ ուղին անցնում է սիրոյ գտման փութոյով եւ լուսաւորում իդեալի հեռանկարով: Մարդու երկրային կեանքը նրա միակ վիճակը չէ. կայ նաեւ հոգու յաւիտեանական կեանքի նպատակը: Հաւատի, սիրոյ եւ յոյսի առաքինութիւնը հաւասարապէս վերաբերում է թէ դէպի Աստուած եւ թէ դէպի մարդն ունեցած յարաբերութիւնը: Անհնարին է ճանաչել, սիրել, հաւատալ Աստծուն՝ առանց մարդուն ճանաչելու, սիրելու եւ հաւատալու:

Նարեկացու բարոյագիտական ըմբռնումների մէջ առանցքային նշանակութիւն ունի ներքին մարդու մասին նրա հայեացքը: Այս հարցը կապուած է Հին եւ Նոր Կտակարանների բարոյաբանական սկզբունքների տարբերութեան

պարզաբանման հետ: Հին օրէնքը գործ ունէր մարմնի մեղքի, յանցանքի եւ պատժի հետ՝ «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» նշանաբանով: Նոր օրէնքը գործ ունի հոգու մեղքի հետ, որը մաքրում է սիրով, չարին չհակառակելու ներման շնորհով, հոգով լուսաւորելով եւ նորոգելով: Բարոյական մաքրագործման մէջ մեծ տեղ ունի աղօթքը: Աղօթքը մարդու դիմումն է Աստծուն՝ իր կարիքի ու ցաւի մասին օգնութեան ակնկալիքով: Անանիա Նարեկացին իր խրատներում ընդգծում էր աղօթքի յուզական ներգործման կարեւորութիւնը: Մեղքը մաքրելու համար սիրտը պիտի բխի արտասուք: Ըստ Անանիայի՝ «շնորհք արտասուացն նշանակ է սիրոյն Քրիստոսի», հոգու զոհն է Աստծուն, եւ երբ «ոչ կարես արտասուել՝ զղջական բանս եւ օրինակ զմտաւ ան, որ սիրտիդ զղջումն գայ եւ արտասուս բխեայ», քանի որ «յորժամ արտասուօք պաղատիս առ Աստուած, յայտ առնես յօժարութիւն սրտիդ եւ խոնարհեցուցանես զաստուած յաղաչանս քո» (ՄՄ, ձեռ. նո. 4215, էջ 373 ա, 378 բ, 380 ա): Անանիայի համար մարդու երկրային նպատակը յանգում է եղծուած մարդկային հոգու նորոգութեանը: Այսպէս էր նաեւ Գրիգոր Նարեկացու համար: Հոգու մաքրագործման նպատակը կամում է նաեւ բարոյական ըմբռնումների կիզակէտը. «Զփոյին պատկերս մեղաւք հնացեալս ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ, Պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա» (Բան ԺԹ, ա):

Նարեկացին կարեւոր տեղ է տուել բարու եւ չարի հարցին: Մի կողմից դա կապուած է «Մի կալ հակառակ չարին» (Մատթ. Ե, 39) եւ «Սիրեցէք զքշնամիս ձեր» (Մատթ., Ե 44) պատուիրանների, միւս կողմից՝ մարդու կամքի ազատութեան միջնադարեան ըմբռնման հետ: Աստուած մարդուն օժտել է ազատ կամքով եւ

բանականութեամբ: Մարդու կամփից եւ խելիքից է կախուած նրա չար կամ բարի արարքը: Չարը չի ստեղծել Աստուած: Չարն աշխարհ է եկել բանսարկուի սաղրանհով: Ու թէեւ Նարեկացին համամիտ է, որ «Միտք մարդոյ ի խնամս չարի են արձանացեալ ի մանկութենէ» (Բան ԺՄ, Ե), բայց նա չի հաշտուում չարի գոյութեան հետ մարդու մէջ: Չարը պէտք է արմատախիլ անել թշնամիներին ներելու եւ սիրելու, չարին չհակառակուելու եւ անտարանական միւս պատուիրանների գործնական կիրառմամբ:

Այն, ինչ Նարեկացին համարում է անբարոյական, մի կողմից դա հանդէս է գալիս որպէս անհատի բարոյազանց արարք, միւս կողմից՝ իբրեւ հասարակական կեանքի ու միջավայրի մերժելի արդիւնք: Երկու դէպքում էլ Նարեկացին ամէն ինչ ընկալում եւ իմաստաւորում է պատուիրազանցութեան մարդկային կերպարի աղարտութեան տեսանկիւնից: Բարոյական սկզբունքները միշտ էլ գտնուում են հակազդեցութիւնների ոլորտում: Նարեկացու համար քրիստոնէական բարոյաբանութեան ընդհանուր սկզբունքները հանրապարտադիր են բոլորի եւ բոլոր ժամանակների համար: Չարի եւ բարու, նշմարտութեան եւ ստի, յանցանքի եւ հատուցման եւ շատ այլ հարցեր վերացական հարցեր չէին Նարեկացու համար: Իբրեւ մտածող՝ նա փորձում էր տալ այդ հարցերի փիլիսոփայական պատասխանը, իբրեւ բանաստեղծ՝ ձգտում էր իր խոհերն ու զգացմունքները մարմնաւորել գեղարուեստական պատկերների մէջ: Նրա տեսադաշտը լայն էր, միտքը՝ խորաբափանց: Խոսքով Անճաւացին գանգատում էր, որ անգամ հոգեւոր դասը արժանի չէ իր կոչմանը եւ նախընտրում է լռել, քան խօսել այդ դասի արատների մասին, «գի զգարշելիսն քան յայտնել՝ ծածկելն է քարուք»(1): Գրիգոր

Մագիստրոսը դատապարտում էր Թոնդրակեցիներին, որոնք պսակագործում էին եկեղեցին, անարգում Յիսուսին, հայեղում նրան, Հին ու Նոր օրէնքները համարում սնահաւատութիւն՝ ստեղծուած «վասն խաբելոյ ժողովրդեանն»(2) եւ այլն: Նարեկացին տեսել եւ զգացել էր անելին:

Բարոյական կատարելութեան իդեալը Նարեկացու համար Քրիստոսն է: Նրան մօտենալու տենչանքը առաքինութիւն էր, նմանուելու իդր՝ կեանքի իմաստ:

Դեռ Անճաւացին էր ասում, որ «գոյ հնար նմանուել Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան. անոխակալութեամբն, սիրովն եւ ողորմածութեամբն եւ կարեկցութեամբն»(3): Քրիստոսը լոյս է Նարեկացու համար, եւ այդ լոյսի տակ էլ նա տեսնում է մարդու բարոյական նկարագիրը: Մարդու բարոյական մաքրագործման աղբիւրը այդ լոյսն է՝ աստուածութեան այդ խորհրդանիշը: Նարեկացուն հասկանալու համար անհրաժեշտ է ամենից առաջ անսալ նրա աստուածամէտ պաղատանքը. «Զիք իմ քազաւոր իշխեցող շնչոյս, բաց ի քէն, Քրիստոս» (Բան ԾԼ, ա): Անշուշտ, Նարեկացու համար բարոյական արժեքների գումարն այլ էր, քան նոր ժամանակների համար եւ նրան պէտք է թողնել անխտիր բոլորին ներելու եւ սիրելու առաքինութիւնը: Եթէ կարեկցանքը դժբախտի նկատմամբ բարձրացնում է մարդուն, ապա նոյն կարեկցանքը սրիկայի հանդէպ նուաստացնում է նրան: Իսկ սա նշանակում է, որ բարոյական արժեքներից ամէն ինչ չէ, որ դիմանում է ժամանակի ոգուն:

Հայ ժողովրդի հոգեւոր մթնոլորտն անհնարին է պատկերացնել առանց Նարեկացու ստեղծագործութեան: Այս երկրում ապրող ամէն մէկի մեղքը նա խոստովանել է իբրեւ իր մեղքը, որպէս զի ամէն մէկն էլ ընթերցելով նրա սրտի խօսքը, լսի իր խղճի ձայնը, զգայ իր

